ԱՍՏԾՈ ՁԱՅՆՆ ԱՅՍ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒՄ

Անշուշտ առանձնաշնորհում է այս առավոտ կրկին վերադառնալ իսպանացի այս ժողովրդի շրջանում: Տեսնես Ջիմը ձայնագրո՞ւմ է սա: Օ՛հ, ձայնագրություն է անում: Ես դեռ ունեմ այն ձայնագրությունը, որ փոքրիկ իսպանական երգչախումբն էր ձայնագրել, երբ այստեղ էի Գարսիա եղբոր հետ: Մոռացել եմ այն երգը, որը նրանք երգում էին ինձ համար: Բայց, օ՛հ, որքա՜ն էր դա ինձ դուր գալիս: Այդ բոլոր երեխաները այժմ մեծացել և ամուսնացել են: Ժամանակ առ ժամանակ ես լուր եմ ստանում նրանցից: Իսկ ասյօր առավոտյան ներս մտա և տեսա փոքրիկ Հովսեփին, և դրանից իրոք ինչ-որ բան կատարվեց իմ հետ, և ես, իհարկե, ուրախ էի ձեզ տեսնելու համար:

2 Եվ, հիմա, մի բառ գիտեմ, որ կարողանում եմ իսպաներենով ասել: Կցանկանայի՞ք լսել այն: «Ալելո՛ւիա»: Երբեք չեմ մոռանա այդ խոսքը...երբ մի անգամ փորձում էի, որ խուլ կինը լսի ինձ: Եվ այսպես, գուցե ես սա ամբողջությամբ սխալ ասեմ, հասկանում եք, բայց որքան որ հիշում եմ, դա «օյե» բառն էր: Ճի՞շտ է: *Լսիր* ինձ: *Լսիր* «օյե»: Բացի այդ չեմ մոռանա «Գլորիա ա Դիոս» արտահայտությունը: Պարզապես հրաշալի՜ է: Օ՛հ, ես առիթ ունեցա լինելու Մեքսիկայի մայրաքաղաքում, խոսել մարդկանց հետ այնտեղ: Ես այնքա՜ն ուրախ էի: Եվ սովորաբար ես...

3 Այստեղից գնալուց հետո եղա Ֆինլանդիայում: Այն միշտ հիշեցնում է ինձ զրույցը մի փոքրիկ Ֆինլանդացի կնոջ հետ: Նրանք ինձ տարան մի տեղ, որ կոչում են «բեթանիա»: Յուրաքանչյուր ազգ իր սեփական գաղափարն ունի (ձեզ մոտ արձագանքո՞ւմ է, շա՞տ մոտ եմ կանգնած դրան: Լա՞վ եք լսում: Ահա այսպես): Այդ կինը...նա հաճելի անձնավորություն էր, բայց նա ինձ նման էր, շատ էր սիրում խոսել: Եվ թարգմանչուհին... նա այնքան արագ էր խոսում, և, և թարգմանչուհին չէր կարողանում բավականին արագ թարգմանել այն, ինչ ինքը ուզում էր ասել: Եվ կանգնում էր, դեմքը կարմրել էր: Նա ասաց. «Ես սա ստանում են այն մարդկանց

փոխարեն, որ Բաբելոնում էին»։

4 Բայց գիտե՞ք, ես նկատեցի, որ բորոր թռչունները երգում են անգլերեն, շները հաչում են անգլերեն, երեխաները լաց են լինում անգլերեն։ Հետաքրքիր է, իսկ ի՞նչ է կատարվում մեզ հետ։ Մեզանից յուրաքանչյուրը կարծում է, որ հազարամյա թագավորության լեզուն, անշուշտ մեր, մեր լեզուն է լինելու։ Իսկ մեզ համար, որ ստացել ենք Սուրբ Հոգին, դա ճշմարտություն է, որովհետև մենք Երկնային լեզու ունենք։

5 Այսօր այստեղ մեզ հետ է եղբայր Ռոուն՝ դիվանագետ Վաշինգտոնից։ Կարծեմ նա հինգ թե վեց նախագահների, յոթ նախագահների ձեռքի տակ է աշխատել։ Եվ գիտե՞ք ինչպես եմ ինձ զգում, այս հարթակի վրա կանգնած խոսելիս, երբ իմ հետևում նման մարդ է նստած։ Նրա վկայությունը միշտ այնքան նշանավոր է եղել ինձ համար, հատկապես երբ նա...Կարծեմ նա լութերական էր, եթե չեմ սխալվում, կամ կաթոլիկ կամ լութերական։ Եվ նա պատմեց այն մասին, թե ինչպես է հոգեգալստական հավաքույթներից մեկի ժամանակ վրանի տակ սողոսկել և բարձրացել...Վերջապես, նա ուղղվել է դեպի խորհան, և երբ հասել է, Տերն իջել է իր վրա և այնքան է օրհնել նրան, որ...Կարծում եմ նա կարող է խոսել մոտ յոթ լեզուներով։ Եվ նա ասաց, որ փորձել է մեկը՝ չի հաջողվել, հետո փորձել է մյուսը, դա էլ չի հաջողվել։ Եվ կարծում եմ նա կարող է իսպաներեն խոսել այնպես, ինչպես դուք բոլորդ։ Եվ այսպես, նա, նա այդ բոլորը փորձեց, բայց չստացվեց։ Եվ տեսնում եք, գիտեք ի՞նչ, Աստված այնքան ողորմած է, որ իջավ ու տվեց նրան մի լեզու, որը նա երբեք նախկինում չէր փորձել, և ասաց. «Դա հաջողվեց»։ Դա ճիշտ է։ Իմ կարծիքով ահա թե ինչպես է լինելու այն կողմում։

6 Շատ հիշողություններ են պահած իմ սրտում վերևի փոքրիկ եկեղեցու մասին, կարծեմ այն...օ՛հ, մոռանում եմ, թե որտեղ է գտնվում։ Այս կողմերում է Տոնտո փողոցից ոչ հեռու։ Եվ ես դա հիշում եմ։ Հիշում եմ «Տոնտո փողոց» բառը, որտեղ առաջ իսպանական Առաքելական եկեղեցին էր։

7 Ես ասում էի հովվին. «Սա հրաշալի տեղ կլիներ արթնության ժողով անցկացնելու համար»,— տեղը բավականաչափ մեծ է, եկեղեցին նոր է, մարդիկ հրաշալի են։ Այսպիսով կարծում եմ, մի օր արթնության ժողով անցկացնել այնտեղ, երբ հերթը կգա։ Աղոթե՛ք դրա համար, որ գանք և արթնության ժողով անցկացնենք։

Եվ այսպես, հուսով եմ, սա ընդհամենը այն բանի կրկնողությունն է, ինչ ունեցանք մյուս եկեղեցում: Հիշում եմ, ինչպես էի հենված ցանկապատին կանգնել բակում, փողոցներով գնում-գալիս, փորձում էինք գիշերվա ժամին հեռանալ այնտեղից, դա, իհարկե, հուզիչ էր, ինչը երբեք չեմ մոռանա: Եվ ես ունեմ փոքրիկ լեդիների մի, մի ձայնագրություն, աղջիկների և եղբայրների, ովքեր երգել և կատարել են այդ ձայնագրությունը: Եվ նրանք փորձում էին երգել «Միայն հավատա» երգը ու չէին կարողանում երգի բառերը ճիշտ արտաբերել ինչպես պետք է, դուք գիտեք: Նրանք «միայն հավատա» ասելու փոխարեն, ասում էին «մնանյան հավատա», հասկանո՞ւմ եք:

8 Եվ հիշում եմ Ռեբեկային՝ իմ աղջկան, Սառային, մինչդեռ նրանք ասում էին. «Հայրի՛կ, երգի՛ր, միացրո՛ւ այդ ձայնագրությունը փոքրիկ...»: «Իսպանուհի» ասելու փոխարեն, նրանք չէին կարողանում այդ բառն ասել, ասում էին «սպանախ աղջիկների, փոքրիկ սպանախ աղջիկների, երգը «Միայն հավատա»:

9 Հա՛, հիշում եմ, նրանք հետևում էին ժողովներին: Այդ ժամանակ արթնություն էր ընթանում, և նրանք ուղեկցում էին ժողովները անգամ մինչև Արևմտյան ծովափը: Եվ ես...մի բան խարիսխվեց իմ սրտում, երբ մենք՝ ես ու Մուր եղբայրը, և Բրաուն եղբայրը մեկնեցինք Կալիֆոռնիայից, այնտեղ՝ մայրաքաղաքում: Եվ այդ գիշեր այդ շենքի միջով իջնելիս, այդ երեխաները կանգնած այնտեղ երգում էին՝ «Հոգում է Նա քո մասին» երգը: Դուք դա լսել եք: «Լույսի մեջ թե խավարում հոգում է Նա քո մասին»: Բազում անգամներ այլազգերի մեջ՝ այս աշխարհի մարտի դաշտում փորձելով հասցնել Քրիստոսի Պատգամը, հիշում էի այդ աղջիկներին և տղաներին, ովքեր երգում էին այդ երգն ինձ համար. «Հոգում է Նա քո մասին, լույսի մեջ թե խավարում, Նա միշտ հոգում է քո մասին»: Այսպիսով դա մեծ ոգեշնչում էր, օգնություն:

10 Ձեր հրաշալի հովվի հետ եմ հանդիպել, և այնքան երջանիկ եմ տեսնելով, որ եկեղեցին կենդանի է, և այս հսկայական գեղեցիկ շենքն ունեք այստեղ, ամեն բան կարգավորված է, կայանատեղը բավականաչափ մեծ է: Պարզապես հրաշալի վայր է Սուրբ Հոգու ձեռքերում, եթե միայն Նրան հնարավորություն տայինք տեսնելու այդ և իմանալու, որ մենք արթնություն ենք խնդրում: Նա, հավատում եմ, կշնորհի:

11 Եվ այսպես, այսօր երեկոյան եղբայր Աութլոուի

եկեղեցում ենք լինելու՝ Հիսուսի Անվան եկեղեցում, որն այն կողմում է գտնվում: Եվ եղբայր Առթլոուն, կարծեմ… նույնպես Առաքելական եկեղեցի է: Կարծեմ եկեղեցին կոչվում է հենց Հիսուսի Անունը: Եթե չեմ սխալվում, նա առաքելական հավատքն է դավանում: Եվ այսպես, այսօր երեկոյան այնտեղ ենք լինելու: Այժմ մենք չենք ասում իսպանական եկեղեցուն «եկե՛ք այնտեղ», որովհետև դուք մնում եք ձեր դիրքում: Իսկ հետո՝ հինգշաբթի օրվանից սկսած Քրիստոնա Զեռներեցների մեծ համագումար է լինելու, երբ ծառայությունները մյուս եկեղեցիներում ավարտվեն, հինգշաբթի օրը: Եվ այս համագումարին նշանավոր հոետորներ են լինելու՝ Օռալ Ռոբերտսը և մեթոդական մի եղբայր, ով վերջերս է փրկություն ստացել, և ասում են, որ նա շատ ուժեղ հոետոր է: Եվ ես վստահ եմ, որ այս համագումարները ձեզ դուր կգան, և ձեզ՝ պատանի երեխաներ, հավաքույթներ են լինելու նաև պատանիների համար, ինչպես քիչ առաջ եղբայրը հայտարարեց: Ես էլ կուղարկեմ իմ երեխաներին, որպեսզի նրանք էլ կարողանան այնտեղ ընկնել: Այնպես որ եկեք, ուրախ կլինենք ձեզ տեսնելու: Թող Աստված օրհնի ձեզ բոլորիդ:

12 Իսկ այժմ ուզում եմ դիմել Սուրբ Գրքին և մի քանի հատվածներ կարդալ Իր օրհնալ Խոսքից: Այս առավոտ ընտրել եմ կարճ ժամանակի համար, չեմ ուզում ձեզ շատ երկար պահել: Ինչ-որ մի թեմա է, և նրանցից մեկը Ա Թագավորաց գրքում է գտնվում, մյուսը՝ Եսայի: Նախ կուզենայի կարդալ Եսայի գրքից: Եվ ես…

13 Ամենուր լա՞վ եք լսում: Այս խոսափողների միջև… ինձ թվում է, նրանք շատ զգայուն են, չգիտեմ՝ ինչու: Այ այնտեղ լա՞վ եք լսում: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Շատ լավ, լավ:

14 Զայնս մի քիչ խոպոտվել է, դա, իհարկե, շատ խոսելուց է: Եվ այն ժամանակից ի վեր, երբ իսպանացի եղբայրների հետ այստեղ էի, կարծեմ տասնվեց, գուցե տասնվեց կամ տասնյոթ տարի առաջ էր, այն ժամանակներից քարոզում եմ: Այն ժամանակ ասացի, որ հոգնած եմ և հիմա էլ հոգնած եմ, բայց Աստծո շնորհքով շարունակում եմ առաջ ընթանալ:

15 Այժմ եկե՛ք դիմենք Եսայի 40, Եսայի 40-րդ գլուխ, և 1-ին գլուխ, ավելի ճիշտ՝ Ա Թագավորաց 3-րդ գլուխ: Եվ մինչ այդ տեղերը բացած պահում ենք Խոսքը

ընթերցելու համար, կուզեյի հիմա մի պահ խոնարհենք մեր գլուխները աղոթքի համար։

16 Մեր երկնայի՛ն Հայր, մենք շնորհակալ ենք այսօր այս հիաշալի սրբարանում կանգնելու առանձնաշնորհման համար, որը ընծայված է Աստծուն և Իր գործին։ Եվ ինչպես մեզ հայտնի է, Քո սպասավորները Քո ծառայությանը նվիրված կյանքով շատ անգամներ են այստեղ՝ այս հարթակի, ավելի ճիշտ՝ ամբիոնի հետևում կանգնել։

17 Եվ *այդ ամենն* այս առավոտ հիշողությունները հետ է բերում՝ հիշողություններ արթնության մասին, որը նոր էր սկսվել Սուրբ Հոգով, որ իջավ մեծ Լույսի տեսքով Կրակի Սյունի նման և ասաց, որ Պատգամը պատելու է աշխարհը։ Եվ այսօր դա պատմություն է։ Պատգամը բռնկվեց մեծ մարդկանց միջոցով այն բանից հետո, երբ Դա տեսան, ինչպիսիք են Օռալ Ռոբերտսը, Թոմի Օսբորնը, Թոմի Հիքսը և շատ ուրիշներ։ Եվ այն ջանքերի շնորհիվ, որոնք միասին գործադրեցինք, մենք տեսնում ենք, որ Պատգամն արթնության կրակներ է վառել Երկրի տակ գտնվող յուրաքանչյուր ազգերի մեջ, հոգեգալստական պատգամից։ Սրա համար մենք գոհանում և փառք ենք տալիս Քեզ, օ՛հ, հզոր Աստված։

18 Իսկ այսօր այս պահին մենք խնդրում ենք, որ մեր սրտերը համապատասխան վիճակի բերես, պատրաստես մեծ Հափշտակությանը, որը հավատում ենք շուտով տեղի է ունենալու։ Եվ եթե մեր սրտերը համապատասխան վիճակում չեն դրա կամ մեկ այլ բանի համար, որ պահել ես մեզ համար, խնդրում ենք ների՛ր մեր թերությունները և խոսի՛ր այսօր մեզ հետ Քո Խոսքի միջոցով։ Օրհնի՛ր այս եկեղեցու հովվին, սարկավագներին, հոգաբարձուներին և ողջ համայնքին, անդամներին։ Օրհնի՛ր փոքրիկ այս երգչախումբը, դաշնակահարին և երաժիշտներին, բոլորին։ Օրհնի՛ր նրանց, ովքեր մտնում են այս շենքի դարպասներով։ Թող ամեն անգամ նրանք փոխված դուրս գան, մի քիչ ավելի մոտ Քեզ, քան այն ժամանակ, երբ նրանք մտան այստեղ։ Շնորհի՛ր այդ, Հա՛յր։ Եվ թող դա այդպես լինի նաև այս առավոտ, քանի որ մենք դա խնդրում ենք Հիսուսի Անունով։ Ամեն։

19 Այժմ դիմելով Եսայի գրքի 40-րդ գլխին՝ կարդում ենք.

> *«Մխիթարեցե՛ք, մխիթարեցե՛ք Իմ ժողովրդին,— ասում է…Աստվածը.*

Երուսաղեմի հետ քաջալերական խոսքերով *խոսեցեք. ձայն տվեք նրան, թե նրա պատերազմելու ժամանակը վերջացել է, որ նրա անօրենությունը ներվել է. որովհետև իր... մեղքերի համար ՏԻՐՈՋ ձեռքից կրկնապատիկ հատուցում է ստացել»:*

Անապատում կանչողի ձայնը. «Պատրաստեցե՛ք ՏԻՐՈՋ ճանապարհը, և լայնուղին հարթեցե՛ք մեր Աստծո համար:

Ամեն մի ձոր պիտի բարձրանա ու...լեռ ու բլուր ցած բերվի, և ծուռը պիտի ուղղվի ու խորդուբորդ տեղերը՝ հարթվեն:

Եվ ՏԻՐՈՋ փառքը պիտի հայտնվի, և ամեն մարմին միասին պիտի տեսնի այն. որովհետև ՏԻՐՈՋ բերանը խոսեց դա»:

Այժմ Թագավորաց գրքում, Ա Թագավորաց 3–րդ գլուխ, ուզում եմ կարդալ 1–ին, 2–րդ և 19–րդ համարները.

«Սամուել մանուկը Հեղիի առջև Աստծուն ծառայություն էր անում: Այն օրերին ՏԻՐՈՋ խոսքը հազվագյուտ էր, ու հայտնի տեսիլք չկար:

Եվ այն ժամանակ եղավ, երբ Հեղին պառկած էր իր տեղում (նրա աչքերն սկսել էին տկարանալ ու չէր կարողանում տեսնել),

Աստծո կանթեղը դեռ չէր հանգել ՏԻՐՈՋ տաճարում, որտեղ Աստծո տապանակն էր, իսկ Սամուելը պառկել էր քնելու,

ՏԵՐԸ կանչեց...ու նա ասաց. «Այստեղ եմ»:

19–րդ համարը.

«Եվ Սամուելը մեծացավ, և ՏԵՐԸ նրա հետ էր, և Նա Նրա ասած խոսքերից ոչ մեկը չանտեսեց»:

20 Օ՛հ, դա բավականին նյութ կլիներ, որ մենք այստեղ մի ամիս դրա շուրջ խոսենք, և ավելի շատ համատեքստ ստանանք այս փառավոր տեքստից: Սակայն այս առավոտ...և մեզ մնում է մոտ քսան րոպե, որպեսզի ժամանակին դուրս գանք մեր...Կարծեմ կիրակնորյա դպրոցը վերջանալու է կամ գուցե սրանից հետո է լինելու, չգիտեմ: Բայց, այնուամենայնիվ, ուզում եմ կիրառել այս թեման՝ *«Աստծո Ձայնն այս վերջին օրերում»:*

21 Սա շատ նշանավոր ժամանակ է: Մենք գիտակցում ենք դա Գրվածքներից, ուր ասվում է. «Սամուելի օրերում

հայտնի տեսիլք չկար», դրա համար. «Առանց տեսիլքի,— ասում է Աստվածաշունչը,— ժողովուրդը կործանվում է»: Պետք է տեսիլք ունենանք: Իսկ տեսիլքները գալիս են մարգարեների մոտ, և դա Աստծո Խոսքն է հայտնված իրենց:

22 Եվ մենք պարզում ենք, որ Հեղին մարգարե չէր, ինքը քահանա էր: Եվ նա գնալով ծերանում էր և նրա աչքերն սկսել էին տկարանալ և չէր տեսնում, թե ուր է գնում, մեծ ու ծանրացած մարդ էր: Եվ նա սկսեց թույլ տալ, որ Աստծո գործը աչքաթող արվի:

23 Եվ դա ինչ-որ ձևով նման է այն ամենին, ինչ այսօր է կատարվում: Կարծում եմ եկեղեցին, կազմակերպությունն ու հարանվանությունները, նրանք երկար ժամանակ են մնացել ասպարեզում, և նրանք սկսում են անտարբեր դառնալ, իսկ Տիրոջ գործը՝ Ճշմարտության Խոսքը մնում է անկատար, որովհետև եկեղեցին ինքնին «տկարատես» է դարձել: Եվ այսօր մենք Աստծո Ձայնի կարիք ունենք, որ խոսի մեր մեջ, հետ բերի մեզ:

24 Եվ տեսնո՞ւմ եք, Հեղին պառկած էր և...նրա տեսողությունը գնալով վատանում էր: Նա քահանա էր և նրանք Տիրոջից հայտնի տեսիլք չէին ունենում: Իսկ դա մեծ կարիք է:

25 Իսկ Աստված խոստացել է այս ժամվա կարիքը բավարարել: Նա միշտ անում է դա: Եվ այսօր մենք Աստծո Ձայնի կարիք ունենք՝ այս ժամվա կարիքները բավարարելու, դիմավորելու ժամը, որում ապրում ենք: Եվ այն բանից հետո, երբ Նա խոստացել է դա, մենք կարող ենք վստահ լինել, որ Նա Իր խոստումը կպահի: Դա է այն վստահությունը, որ հավատացյալն ունի իր Արարչի հանդեպ, որ Նա խոստացել է կարիքը բավարարել:

26 Եվ այսօր պատճառներից մեկը, որ եկեղեցին գտնվում է այն վիճակում, որում կա, այս է՝ այնքան շատ ձայներ, այնքան շատ այլ ձայներ կան եկեղեցին Աստծո Ձայնից շեղելու համար, որ շատ կասկածելի է, թե շատերը կլսեն Աստծո Ձայնը, չնայած Նա խոսել է անմիջապես իրենց մեջ: Նրանք գուցե Դա չհասկանան էլ, որովհետև օտար մի բան կլինի նրանց համար: Նրանք այնքա՛ն են կենտրոնացել այսօրվա ձայների վրա:

27 Եվ եթե ուշադրություն դարձնենք մեր կարդացած սուրբգրային հատվածին, Աստծո Ձայնն օտար էր նրանց

համար։

28 Եվ այսօր դա նորից այնպես է դարձել, որ Աստծո Ձայնը…Այնքան շատ ուրիշ ձայներ կան։ Եվ հետո, եթե Աստված խոստացել է, որ մեզ տալու է Դա, և եթե ուրիշ ձայները Աստծո Ձայնին հակառակ են, ուրեմն, դա պետք է մեր թշնամու ձայնը լինի՝ մեզ շփոթեցնելու համար, որ չհասկանանք Աստծո Ձայնը, երբ Այն խոսի։

29 Եվ մենք նկատում ենք, որ նման մի բան կատարվեց Հեղիի ու Սամուելի հետ, բայց Հեղին իսկույն ճանաչեց, որ դա Աստված էր։ Եվ դա բացարձակ անարգաք էր Հեղիի համար։ Որովհետև Աստծո Ձայնը, որ խոսում էր Սամուելի հետ, պատմեց նրան Հեղիի սխալ գործերի մասին, որովհետև նա երես էր տվել իր որդիներին, և, և նրանք զոհաբերություններից դրամ ու միս էին վերցնում։ Դա սխալ էր, նրանք Աստծո Խոսքին հակառակ բաներ էին անում։

30 Եվ Սամուելը…միակ բանը, որ նա կարող էր անել՝ ուղիղ խոսելն էր։ Եվ նա մի փոքր տրամադրված չէր այդպես անելու, քանի որ դա հակառակ էր այն վայրին, ուր նա ուղարկված էր դաստիարակվելու համար՝ Հեղիին և տաճարին։ Սակայն Հեղին ասաց. «Խոսի՛ր» Հասկանո՞ւմ եք։ Եվ նա ճիշտը պատմեց, թե ինչ է լինելու, որ Սամուելի…ավելի ճիշտ՝ Հեղիի օրերը որպես քահանա լրացել էին, որովհետև Աստված ասած, և Նա Իր պատգամն էր ուղարկում Սամուել մարգարեի միջոցով։ Շատ արտասովոր էր նրա ծնունդը, մանուկ հասակից ընձայված էր Աստծուն։ Աստված խոսեց նրա հետ, երբ նա դեռ երեխա էր և պատրաստում էր նրան մի գործի համար, որը դեռ առջևում էր։ Իսկ Հեղիի ժամանակը մոտենում էր իր ավարտին։

31 Այսօր երկրի վրա այնքան շատ ձայներ կան, շատ դժվար է, որովհետև դա խլացնում է Գերբնականի Ձայնը։ Այնքան շատ ինտելեկտուալ ձայներ կան, հզոր մարդկանց բարձր ձայներ, ովքեր ինտելեկտուալ են, որ իրենց ինտելեկտուսլ պայմաններում նույնիսկ ցնծացնում են ազգերին։ Նրանք պարզապես մեկ երեկոյի մարդիկ չեն, այլ նրանք ցնծացնում են ազգերին, համախմբելով խոշոր կազմակերպությունները, հսկայական շքեղ կազմակերպությունները։ Եվ մարդ փոքր–ինչ շփոթվում է։ Դա բավական է իրենց շփոթեցնելու համար, թե ինչպես են այս բաները ընթանում և բարգավաճում։ Եվ ձայներ կան, որ, որ բարձրանում և անում են այս բաները, և

դա պատճառ է հանդիսանում, որ Աստծո Ձայնը՝ Աստծո ճշմարիտ Ձայնը ինչ-որ տեղ հեռու-հեռվում թողնվի:

32 «Եվ Աստծո Ձայնը,— ասում են,— իսկ ինչպե՞ս ենք մենք իմանալու, որ դա Աստծո Ձայնն է»: Որովհետև այսօրվա համար...Այդ ժամանակ այն հաստատված մարգարեի մեջ էր: Այսօր՝ մեր օրերում, ինչպե՞ս ենք իմանում, որ դա Աստծո Ձայնն է: Որովհետև դա մարգարեական Խոսքի դրսևորում է: *Սա* է Աստծո մարգարեն: Եվ միայն Աստծո ճշմարիտ Ձայնն է, որ հետ է բերում այդ ճշմարիտ, կենդանի, Գերբնական Աստծուն, Իր Գերբնական Խոսքով, Ճշմարիտ Խոսքի Գերբնական դրսևորումով: Այդ ժամանակ իմանում ենք, որ Դա Աստծո Ձայնն է: Որովհետև, և այդ Գեր...Այնքան շատ այլ բաներ կան ուրիշ ոլորտներում, որոնք գրեթե խլացումն են Դա: Բայց հիշե՛ք, Այն փայլելու է, ի հայտ է գալու: Ի հայտ է գալու:

33 Եվ այսպես, քաղաքական աշխարհում այսօր ձայն կա: Դա հզոր ձայն է, և մարդիկ, իհարկե, քաղաքական այս մեծ օրվա մեջ են, նրանք...Այդ ամենը խառնվել է նրանց եկեղեցուն և այլն: Եվ հաճախակի, ինչը օրերս տեսանք, քաղաքական ձայնն իրականում ավելի հզոր է եկեղեցիներում, քան Աստծո Ձայնը, հակառակ դեպքում ամերիկացիները երբեք չէին անի այն, ինչ արեցին: Հասկանո՞ւմ եք: Նրանք երբեք դա չէին անի: Եթե միայն Աստծո Ձայնը կենդանի պահվեր եկեղեցում, նրանք այդ սխալները երբեք չէին անի: Բայց այսօր քաղաքական ձայնը երկիր վրա շատ ավելի ուժեղ է, քան Աստծո Ձայնը, որ մինչև անգամ մարդիկ վաճառել են իրենց քրիստոնեական առաջնեկության իրավունքը հանրաճանաչության, կրթության և քաղաքական ուժի մի ման ապուրի համար: Այնքան ամոթ է դա տեսնելը: Հենց այն, ինչով ստեղծվել էր մեր երկիրը, ինչի հիման վրա է այն ստեղծվել, մարդիկ հետ դարձան և, և քվեարկեցին այն բանի համար, ինչը մենք թողել էինք մյուս երկրում: Եվ, և Պլիմութ Ռոքը, *Մեյֆլաուերը* և այլն եկան այստեղ և, և հաստատեցին այս հզոր տնտեսությունը, որը մենք ունենք: Հենց այն, ինչից դուրս գալու համար մենք այնքան ուժեղ պայքարում էինք, նորից մեզ գցեցինք ուղիղ դրա ճիրանների մեջ, որովհետև Աստվածաշունչն է ասում, որ դա այդպես է լինելու:

34 Եվ Հեղիի համակարգը. քահանա մարգարեի փոխարեն: Մարգարեն Խոսքն է, իսկ քահանան եկեղեցին

էր։

35 Եվ դա հասել է այնպիսի կետի, որ սկսում է այնքան թուլանալ, որ Խոսքը օտար է մարդկանց համար։ Նրանք Դա չեն հասկանում։ Ուստի դու կարող ես խոսել Խոսքը, բայց նրանք Դա չեն հասկանում, որովհետև վարժված չեն Դրան։ Պողոսն ասում է. «Եթե փողը անորոշ ձայն հանի, ո՞վ կիմանա, որ պետք է պատրաստվել պատերազմի»։

36 Մարդիկ վարժված են եկեղեցական ձայնին, եկեղեցական փողին. «Մեզ մոտ կիրակնորյա դպրոցում ավելի շատ են, քան մնացած տեղերում»։ Դա ոչինչ չի նշանակում։ «Մեր հարանվանության մեջ ավելի շատ են, քան մնացած տեղերում։ Հարանվանությունների մեջ ամենամեծը մենք ենք»։ Տեսնում եք, ահա այդ տեսակի ձայնին են մարդիկ վարժված։ Նրանք դուրս են գալիս փողոց մարդկանց գրավելու և եկեղեցի բերելու համար։ Մեծ համագումարների ժամանակ տասնյակ հազարավոր անգամ հազարների, բերում են նրանց։ Ինչո՞վ են նրանք հետաքրքրված։ «Մենք ամենամեծ եկեղեցին ունենք։ Մենք ամեամեծ ժողովն ունենք։ Մեր կիրակնորյա դպրոցի ժամանակ ամենաբարձրաստիճան անդամներն են մասնակցում։ Քաղաքապետը մեր եկեղեցին է հաճախում»։ Դա կարող է շատ լավ լինել, բայց եթե այդ նույն եկեղեցին վարժված չէ Աստծո Ձայնին, Ավետարանի Փողին, ի՞նչ օգուտ։

37 Եվ երբ մի հարց է ծագում ճիշտ այնպես, ինչպես մեր կառավարության մեջ եղավ, ի՞նչ կատարվեց։ Եկեղեցին չէր ճանաչում Փողի Ձայնը, և նրանք չգիտեին, թե ինչ անեն։ Բարգավաճման մեծ խոստումը, գալիս է ինտելեկտուալ հսկան, ու նրանք անմիջապես անցան այն բանի կողմը, որ կանխագուշակել էր Սուրբ Գիրքը, և դա ներս բերեցին։ Տեսնո՞ւմ եք, քաղաքական ձայնը։ Եվ ապացուցվեց, որ դա խլացրել է կրոնական Ձայնը՝ Ավետարանի Ձայնը, այլապես երբեք չէին անի այն, ինչ արեցին։ Որովհետև մեզ շատ ու շատ բաներ են խոստացել, մեզ բարգավաճում են խոստացել, և կասկածի նշույլ անգամ չկա, որ մենք դա կստանանք։

38 Բայց, այնուամենայնիվ, դա ոչ մի նշանակություն չունի հավատացյալի համար։ Կարդացե՛ք Եբրայեցիների թղթի 11-րդ գլուխը, լսե՛ք, թե սբ. Պողոսն ի՞նչ է ասում, թե ինչպես էին նրանք այդ օրերում՝ ոչխարների ու այծերի մորթով շրջում, զրկանքներ կրում, տեղ չունեին ապրելու, չէին կարողանում քաղաք մտնել։

39 Կարդում էի Նիկեայի Խորհրդում, երբ այդ կարևոր հարցերը բարձրացան Նիկեայում՝ Հռոմում, Քրիստոսի մահից հետո երեք հարյուր տարի հետո Նիկեայի մեծ Խորհրդում, երբ հզոր եկեղեցին կանգնում էր ճշմարտության համար, նրանք Աստվածաշունչն էին ուզում: Իսկ Հռոմի առաջին եկեղեցու հռոմեացի դավանափոխները դոգմաներ մտցրեցին, ասենք, օրինակի համար, մեր Սուրբ Ծնունդը:

40 Սուրբ Ծնունդը, Քրիստոսը ոչ ավել քան ես ծնվել է դեկտեմբերի 25-ին: Չէ՞ որ Հրեաստանի բլուրները ձյունառատ էին և Նա...Դա հակասում է աստվածաշնչյան մյուս բոլոր մարգարեություններին: Նա ծնվել է գարնանը, ինչպես բոլոր գառնուկներն են ծնվում: Ինչո՞ւ Նա ծնվեց գոմում, այլ ոչ թե տանը: Նա Գառնուկ էր: Ինչո՞ւ Նա պարզապես վազելով վերև չբարձրացավ զոհասեղանի մոտ կամ Իր զոհասեղանի մոտ, որտեղ նա գամվեց՝ խաչի մոտ: Նրան տարան խաչելության: Ոչխարին են տանում սպանդանոց: Նա Գառնուկ էր: Հետևաբար, Նա ծնվել է այն ժամանակ, երբ գառնուկներն էին ծնվում:

41 Սակայն տեսնում եք, դա անելու համար, նրանք արևի աստծո տարեդարձ ունեին, որն էր՝ Արեգակնային համակարգում, արևը հինգ օրվա ընդացքում՝ դեկտեմբերի քսանից մինչև քսանհինգը համարյա շարժում չի ունենում: Դրանից հետո օր օրի քիչ-քիչ փոփոխվում է, գնալով ավելի, ավելի ու ավելի է երկարում, մինչև հասնում է իր ամենաերկար օրվան, որը հուլիս ամսում է: Իսկ հետո դեկտեմբերին նրա ամենակարճ օրն է: Եվ այդ ժամանակ, քսանհինգի այդ կարճ ժամանակահատվածում՝ քսանից մինչև քսանհինգը, նրանք Հռոմեական կրկեսում անցկացնում էին արևի աստծո տարեդարձի տոնակատարությունը: Եվ այսպես, Յուպիտերը, որը հռոմեական աստվածն էր, այդ ժամանակ նրանք մտցրեցին դա՝ ասելով. «Մենք կվերցնենք Աստծո Որդու և արևի աստծո ծննդյան տարեդարձը, կմիացնենք իրար, որպեսզի մի մեծ տոնակատարություն լինի»: Դա հակասական էր: Եվ, օ՜հ, շատ են նորամուծությունները, որոնք նրանք մտցրել են անտեղ:

42 Եվ այն ժամանակ, երբ Աստծո ճշմարիտ մարդիկ, ովքեր ուզում էին մնալ Խոսքի հետ, Պոլիկարպի, Իրինեոսի, Մարտինի նման, այդ հզոր, վաղ սուրբերը, ովքեր ուզում էին մնալ Ճշմարտության մեջ...Եվ Նիկեայի

Խորհրդի ժամանակ քննարկություն անելիս, այդ մարդկանցից ոմանց այնպես մերժեցին, որ մինչև անգամ մարգարեները անապատից դուրս եկան՝ առանց որևէ բանի իրենց վրա, բացի ոչխարի մորթու կտորից, որպեսզի մասնակցեն այդ խորհրդին: Բայց նրանք Տիրոջ Խոսքը գիտեին, սակայն հանրաճանաչությունը, արյունոտ քաղաքականության այդ տասնհինգ օրը խլացրեց Այն: Այնուհետև մենք հազար տարի Մութ Միջնադար ունեցանք, հասկանում եք:

43 Բայց Աստված խոստացել է, որ այդ Փողը նորից է հնչելու: Մարդիկ միշտ ականջ են դնում Աստծո ճշմարիտ Ձայնին, միշտ քննում են Խոսքով այն, ինչ անում եք:

44 Քաղաքականության ձայնը…Այսօր մենք Ամերիկայում և աշխարհի մնացած մասում բարձր խոսող ձայն ունենք, և դա Հոլիվուդի ձայնն է: Այն գերել է աշխարհը: Թող Հոլիվուդում ինչ-որ մեկը ինչ-որ մի բանով դուրս գա, ամբողջ քաղաքով մեկ դա կհայտնաբերեք: Եվ այսպես, մենք նկատում ենք, որ նրանք ոճ են սահմանել մեր կանանց համար, նրանց հագուստի, նրանց սանրվածքի համար: Նրանք են սահմանել այդ հագուստը:

45 Եկեղեցին պետք է իմանա Աստծո Փողի Ձայնը դրա վերաբերյալ: Սակայն այնտեղ այնքան շփոթություն կա, որովհետև տեսնում ենք, թե ինչպես են ուրիշներն այդպես անում, օրինակներ են: Երբեք չնմանակվեք այդ օրինակին, որովհետև դա կործանարար է: Միշտ լսեք Աստծո Ձայնը, թե Նա ինչ է ասում դրա վերաբերյալ:

46 Եվ հետո մենք նկատում ենք, որ նրանք Հոլիվուդում ինչ-որ բաներ են առաջադրում: Թո՛ւյլ տվեք ընդհամենը մի րոպե խոսել դրա մասին, նախքան թեման շարունակելը: Վերջերս մի բան դուրս եկավ, որ Հոլիվուդում մի, մի մարդ…Ես ոչ մի բան չունեմ այդ մարդու դեմ, նա մի մահկանացու է, ում համար մեռավ Քրիստոսը: Պարզապես ձեզ ցույց տալու համար: Նրանք մի փոքրիկ բան են ստեղծել, որը կոչվում է, առաջ երեխաները դա հուլա-հուպ, հուլա-հուպ կամ նման մի բան էին կոչում: Եվ երբևիցէ նկատե՞լ եք գոեհիկությունն ու այլ բաները, որոնք հետևում են դրան փոքրիկ երեխաների մեջ: Դա սխալ է:

47 Եվ այսպես, Հոլիվուդը լի է հրաձիգներով: Հիմա, ցանկացած մարդ, ով պատմությունը գիտի, գիտի, որ այդ մարդիկ իրենց ժամանակ, ովքեր հրաձիգներ են եղել մյուս տղաների պես, ազնիվ քաղաքացիներ չեն եղել,

նրանք ռենեգատներ են եղել Ալ Կապոնեի և Դիլինգերի նման: Նրանք Հոլիվուդյան մի ներկայացում ունեն, որը կոչում են, հեռուստատեսությամբ է գնում, կոչում են «Վառոդի ծուխ»: *Հեռուստացույցով* լսեցի, որ տղան, ով այդ դերը խաղում է՝ Արնեստը, կամ Արնես, կամ, մոռացել եմ, թե ինչպես էր նրա անունը, և նա պետք է վերցներ…Նա Մաթ Դիլլոնի դերն է խաղում, ով շերիֆ էր Կանզասում և Մաթ Դիլլոնը նապաստակի պես վախկոտ էր: Նա քսանութ անմեղ մարդ է կրակել թիկունքից, դուրս էր գալիս Դոդջ քաղաքից և թփի տակ սպասում էր: Եվ երբ որևէ մարդ էր անցնում, որ որևէ մեկը կանչում էր նրան և ասում, որ ինչ-որ հանցագործ է գալիս, որ մնա այնտեղ, և երբ այդ մարդը մոտենում էր, թիկունքից կրակում էր նրան: Այժմ մենք հայտնաբերում ենք, որ նա «մեծ մարդ» է, որ գալիս է: Մինչդեռ դա, դա մեղքի բացարձակ գովաբանում է: Սակայն մեր քաղաքի փոքրիկ երեխաները շատ ավելին կարող է պատմել Մաթ Դիլլոբնի մասին, քան Քրիստոսի: Խանութները, էժան խանութները և հագուստի բաժինները լիքն են կախված փոքրիկ-փոքրիկ խաղալիք ատրճանակներով՝ փոքրիկ գլխարկներով, որոնք, որոնք ցանկացած տեղից կարող եք գնել: Դրանք կրելը նորմալ է, ես, ես պարզապես ասում եմ ձեզ, հասկանո՞ւմ եք: Հետո նրանք, նրանք, առևտրային աշխարհը վերցնում է այդ բանը և դրա շնորհիվ միլիոնավոր դոլարներ է աշխատում:

48 Մենք ունենք «Սուրբ Պատրիկի օր», ունենք այն, ինչ կոչում ենք «կրոնական տոներ»: Եվ առևտրային աշխարհը վերցրել է դա, և նրանք միլիոնավոր դոլարներ են աշխատում: «Մայրության օր»՝ ծաղկեփնջեր: Մինչդեռ ամեն օրը պետք է պատվելի օր լինի մայրիկի համար: Նա ինչ-որ տեղ մենության մեջ է, ծեր, գնա՛, այցելի՛ր նրան: Դա ավելի արժանավուն կլինի, քան բոլոր ծաղիկները կամ էլի ինչ-որ բան, որ կարող ես նրան ուղարկել; Հասկանո՞ւմ եք, բայց նրանք վերցնում են դա: Դա մի ձայն է, և, և մենք անմիջապես միաձուլվում ենք դրա հետ: Իրականում, դա սխալ է: Բայց ի՞նչ եք պատրաստվում անել: Հասկանո՞ւմ եք, մենք, մենք պարզապես…

49 Փորձում եմ հասնել այն պահին, որ ձեզ մի բան պատմեմ, այն, ինչին ես, ես հավատում եմ: Ձայնը՝ Աստծո Ձայնը հազվադեպ է:

50 Եվ այսպես, մենք պարզում ենք, որ նրանք չափանիշ են սահմանում: Երբևէ ուշադրություն դարձրե՞լ եք: Մեր

երիտասարդ տղաները «Ռիկի» և «Էլվիս» ներ են դարձել։ Եթե այդ անունով երեխա ունեք, անհապաղ փոխեք, կոչեք նրան համար մեկ կամ երկու կամ նման ձևով։ Մի՛ անվանեք այդպես, դա սարսափելի է…Դուք կասեք՝ անունը ի՞նչ նշանակություն ունի։ Իհարկե, դա մի բան նշանակում է։ Ձեր անունը բնութագրում է ձեր կյանքը։ «Հիմա, Բրանհամ եղբայր, դուք թվաբանությամբ եք զբաղվում»։ Ոչ, ես թվաբանությամբ չեմ զբաղվում։ Ես հիմնվում եմ ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ խոսքի վրա։ Ինչո՞ւ այդպես պատահեց, որ երբ Հակոբը…նա ապրում էր իր անվանը համապատասխան, որպես, որպես խաբող, ուրիշի տեղը զբաղեցնող, Հակոբ։ Եվ երբ Աստված փոխեց նրան, Նա նաև փոխեց իր անունը։ Նա Սավուղի անունը փոխեց Պողոսի, Սիմոնինը՝ Պետրոսի։ Իհարկե, դրա մեջ մի բան կա։ Եվ Ռիկի ու Էլվիս և սրա նման անունները, ժամանակակից ամերիկյան անուներ են, որոնք երեխային ավտոմատ կերպով գցուն են ուղիղ դրա մեջ։ Հասկանո՞ւմ եք, թե ինչ եմ ուզում ասել։

51 Հուսով եմ հիմա ես չ…Ավելի լավ է վերադառնամ և շատ չհեռանամ, սահմաններից դուրս չգամ։ (հասկանո՞ւմ եք, թե ինչ ի նկատի ունեմ), որ չեք հասկանա։ Բայց այս բոլոր բաներն անգամ սովորական մարդու համար են անհասկանալի։ Նրանք դա չեն հասկանում, որովհետև նրանք մի միտում ունեն։ Այդ է այն ամենը, ինչին նրանք ականջ են դնում, այդ ձայներին։

52 Կա փիլիսոփաների ձայներ, կոմունիզմ, որ խոստանում է մի բան, ինչը չի կարող ապահովել։ Մինչդեռ ամերիկացիների զգալի տոկոսը տարված է կոմունիզմով։ Ես եղել եմ կոմունիզմում, կոմունիստական զոնաներում, ավեի ճիշտ՝ Գերմանիայում, Բեռլինի արևելյան մասում։ Նրանք հսկայական մեծ տներ ունեին՝ դուրսը ցույց տալու համար։ Պետք է ներս մտնեք, նրանք անգամ ավարտված չեն։ Դա կեղծ տնտեսություն է, նրանք փորձում են ինչ-որ բան վրա քաշել։

53 Եվ Ռուսաստանում, կոմունիզմի ծննդավայրում…որ, տարիներ առաջ, երբ ես ընդհամենը տղա-քարոզիչ էի, կարելի է ասել երեսուներեք տարի առաջ, երբ նացիզմը, ֆաշիզմն ու Կոմունիզմն էին բարձրանում, ասացի. «Ես խոսում եմ Տիրոջ Անունով։ Նրանք բոլորը կհայտնվեն կոմունիզի մեջ»։ Սակայն, դուք երբևէ մտածե՞լ եք այն մասին, որ Աստված մեզ ելքի ճանապարհ է թողել, եթե միայն գնանք դրանով։ Ռուսաստանի միայն մի

տոկասն է կոմունիստ, մեկ տոկոսը, բայց կառավարող տոկսոնը նրանք են: Կոմունիզմի մի տոկոսը...ավելի ճիշտ, Ռուսաստանի մեկ տոկոսն է կոմունիստ, բայց կառավարողը նրանք են:

54 Եվ նույն բանն է, Հոլիվուդը մի փոքր տեղ է, բայց նրանք են կառավարում:

55 Միացյալ Նահանգների բնակչության մոտ մեկ երրորդը կամ երկու երրորդ մասը եկեղեցի է հաճախում և եկեղեցու անդամներ են, բայց այդ հարանվանությունների մեջ կառավարողը նրանք են:

56 Այն, ինչի կարիք ունի կոմունիզմն այնտեղ այն է, որ Աստծո Ձայնը բարձրանա իրենց մեջ և Դա կխայտառակի նրանց:

57 Ֆինլանդիայում, երբ այն փոքրիկ տղան մեռելներից հարություն առավ, և ինձ տանում էին երեք թաղամաս հեռու այնտեղից, ուր այդ փոքրիկ, մահացած տղան էր հարություն առել, կոմունիստական զինվորները, ռուսներն այնտեղ կանգնած՝ ռուսական ոճով պատիվ էին տալիս, և արցունքները հոսում էին նրանց այտերից ցած: Նրանք ասացին. «Մենք կնդունենք այն Աստծուն, Ով կարող է մեռելներին հարություն տալ»: Դա կարթոլիկ և լութերական եկեղեցու և բոլոր այդ հարանվանությունների անփութության պատճառով է և նրանք առնում են բոլոր փողերը, կազմակերպություններ են կառուցում, իսկ մարդկանց ոչինչ չեն տալիս: Նրան ապրում են մյուս մարդկանց նման: Կա...

58 Այն, ինչի կարիք ունի Ռուսատանն այն է, որ մի մարգարե դուրս գա ասպարեզ Տիրոջ Խոսքով, ով կկարողանա, կկարողանա փակել բերաններ: Այն ժամանակ այդ ինսուն տոկասը կվերցնեն իշխանությունը:

59 Այն, ինչի կարիք ունի Ամերիկան Աստծո մարգարեի Ձայնն է, ով կկարողանա կանգնել և դատապարտել Հոլիվուդը, դատապարտել այս բաները Հիսուս Քրիստոսի Անունով, և Սուրբ Հոգու Եկեղեցին կվերցնի իշխանությունը: Ծփոթությունը չափազանց շատ է, հասկանո՞ւմ եք, Դրան հակառակ ձայները չափազանց շատ են:

60 Եկեղեցին...իր ձայնը...ամեն մեկը ավելի շատ անդամներ է ուզում: Մկրտականները բոլորին են ուզում, մեթոդիստները նույնպես, երեցականները: Մենք այդ

ամենն ունենք։ Իսկ կաթոլիկները կարծես թե բոլորին են տիրելու, և կտիրեն։ Դա հենց Աստծո Զայնն է, որ դուրս է գալիս այս Սուրբ Գրքից։ Նրանք են իշխելու։

61 Բայց վերջում Բարձրյալ Աստվածն է իշխելու։ Մի օր Սուրբերն են իշխանությունը ժառանգելու, Աստվածաշունչն է այդպես ասում։ Նրանք են իշխանությունը ժառանգելու։

62 Չափից դուրս շատ ձայներ կան։ Հետո կեղծ մարգարեի ձայն կա։ Դա սարսափելի ձայն է, մարդ, ով իրեն մարգարե է անվանում։ Մարգարեն, իհարկե, քարոզիչն է։ «Մարգարե» ժամանակակից բառը հենց նշանակում է՝ մարդ, ով քարոզում է ոգեշնչման ներքո։ Մարդ կա, ով կանգնում և իրեն մարգարե են անվանում և հերքում է Աստծո Խոսքը, հերքում է Աստծո Ճշմարտությունը։ Այնքան շատ ձայներ գոյություն ունեն։

63 Ընդամենը մի քանի րոպե առաջ մի եղբայր այնտեղ՝ դրսում ցուցումներ էր ինձ տալիս, թե ինչպես գամ այստեղ, բայց ես...ենթադրում եմ, նա զարմացավ, թե ինչու ես շարունակեցի փողոցով վերև բարձրացալ, շրջվեցի և հետ եկա։ Եղբա՛յր, եթե դուք այստեղ եք, ես մի բան էի լսում, դա մեր, մեր սևամորթ բարեկամներն էին։ Նրանք այստեղ տաճար ունեն «Հեղի Մուհամմեդ» կամ նման մի բան են կոչում, «երիտասարդ Հեղի Մուհամմեդ»։ Բարձրանում են ինչ–որ մի ձայնով և ասում են, որ նրանք են այն ձայնը, որ սև ռասային դուրս է բերելու այս քաոսից։ Ինչը տեսնում եք, հենց դա, իրենց, իրենց, իրենց մահմեդականությունն այստեղ է, իրենց մզկիթը։ Մի՞թե չեք տեսնում, որ հենց դրա հիմքը, սխալ է։

64 Սևամորթերը, ինչպես և սպիտակամորթերը, թխամաշկերը դեղնամորթերը, ոչ թե մա... մահմեդականությանը պետք է դառնան, այլ՝ Քրիստոսին, հենց այն սկզբունքներին, որոնք Սուրբ Գիրքն է ուսուցանում։ Մահմեդականությունը Խոսքին հակառակ է։ Մի անգամ Դուրբանում՝ Հարավային Աֆրիկայում, առանձնաշնորհում ունեցա տաս հազար մահմեդականների Քրիստոսին բերելու։ Այն ոչինի չի տալիս հոգեբանությունից բացի։ Ինչը կապված է հոգեբանության հետ կարգին է, քանի դեռ Խոսքը չի հերքում։ Բայց երբ հոգեբանությունը հերքում է Խոսքը, այդ ժամանակ դա ճիշտ չէ։ Այն անորոշ ձայն է հանում։ Ամեն բան կանցնի, բացի Աստծո Խոսքից, Հիսուսն է այդպես ասում. «Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Իմ

Խոսքերը բնավ չեն անցնի»: Հետևաբար, տեսնո՞ւմ եք, պետք է Խոսքի՝ Ձայնի հետ մնանք:

65 Այնքա՜ն շատ շփոթեցնող բաներ կան: Մարդիկ ոտքի են ելնում, նրանք Խոսքը չեն իմանում, խոսում են, և գուցե դա շատ խելամիտ է հնչում: Կոմունիզմը շատ ողջամիտ բան է, «Բոլորը մեկ են: Էլ կապիտալիստներ չեն լինի, բոլորը կոմունիստ են լինելու»: Երբևիցե կանգ առե՞լ եք մտածելու, որ կոմունիզմը սուտ արթնություն է: Իսկ որտեղի՞ց է վերջինս այդ ամենն ընդօրինակել: ...Հիսուսն է ասում. «Երկու հոգիներն այնքան մոտ կլինեն, որ դա ընտրյալներին էլ կմոլորեցնի, եթե հնարավոր լինի»: Եվ այն ամենը, ինչ սատանան ունի Աստծո ստեղծագործության աղավաղումն է: Մեղքը այլասերված արդարություն է: Սուտը սխալ ներկայացված Ճշմատրություն է: Ծնությունը մի արարք է, որին Աստված մեզ կարգել է, այլասերված: Ցանկացած տեսակ անհավատություն հավատքի աղավաղումն է: Աղավաղումը ընդունելու համար պետք է Ճշմարտությունը հերքել: Հասկանո՞ւմ եք, պարզե՛ք այդ ձայները, ստուգե՛ք դրանք Խոսքով և տեսեք արդյոք դա Ճշմարտություն է թե ոչ:

66 Օ՛հ, ինչքան կարող էինք խոսել և խոսել այսօրվա ձայների մասին, բայց մեր ժամանակը սպառվել է: Այնքան շատ ձայներ գոյություն ունեն, որ մարդիկ չգիտեն, թե ինչ անեն: Մեթոդականները, ի վերջո, կլսեն մկրտական քարոզչին, կգնան նրանց մոտ, որոշ ժամանակ կմնան, իսկ հետո կգնան լութերականների մոտ: Եվ նույնը հոգեգալստականների շրջանում, նրանք տարբեր խմբեր ունեն, մեկը վազելու է մեկի մոտ, ինքն էլ՝ մյուսի, այնուհետև հետ ու առաջ: Դա ցույց է տալիս, որ դուք անկայուն եք: Լսե՛ք Նրա Ձայնը: Ահա Այն՝ Ձայնը, գրված թղթի վրա, Ձայնը կհաստատվի, եթե Դա Ճշմատրություն է:

67 Եկեղեցական աշխարհը չգիտի, թե ինչ անի, քաղաքական աշխարհը քաոսի մեջ է, ամեն բան կարծես քաոսի մեջ է: Այստեղից մարդիկ վազում են, էլի ինչ–որ բան է դուրս եկել, ինչ–որ մի բաճկոն, մի վերարկու: Հռոմում էի, այնտեղ տասնինները տարբեր հաստատված մեխեր կան, որոնք գամվել են Հիսուսի ձեռքերի մեջ, իսկ այնտեղ միայն երեքն էին, մինչդեռ նրանց մոտ գրված է, որ տասնինները տարբեր մեխեր կան: Հիմա ի՞նչ տարբերություն, թե մեխը ում մոտ է: Քրիստոսը

մեզ մեխեր չթողեց երկրպագելու համար, Նա մեզ թողեց Սուրբ Հոգին Իր Խոսքի միջոցով: «Այս նշանները պիտի ուղեկցեն նրանց, ովքեր հավատում են. կունենա՞ն իսկական մեխը»: «Նրանք կունենան...Այս նշանները պիտի ուղեկցեն նրանց, ովքեր հավատում են: Նրանք կպատկանե՞ն այն հարանվանությանը, որը Ես եմ հիմնել»: Նա ոչ մի հարանվանություն չի հիմնել: Տեսնո՞ւմ եք, թե ձայնն ինչպես է հակասում:

68 Բայց «*Այս* նշանները պիտի ուղեկցեն նրանց, ովքեր հավատում են: Իմ Անունով դևեր պիտի հանեն»: Այստեղ է Խոսքը. «Նրանք նոր լեզուներով պիտի խոսեն. օձեր պիտի բռնեն, որոնք նրանց չպիտի վնասեն, եթե մահացու թույն խմեն, նրանց չպիտի վնասի, եթե հիվանդների վրա ձեռք դնեն, նրանք պիտի առողջանան»: Եվ հետևեք, որ այս բաներին գումարած Սուրբ Գրքի մնացած մասը ամբողջական լինեն:

69 Հիմա, դա առանձին վերցված չի հաստատելու այն, ամենևին: Ահա թե մենք, հոգեգալստականներս, որտեղ ենք շեղվում ճանապարհից: Հիսուսը չասա՞ց. «Ծատերն այն օրը կգան Ինձ մոտ և կասեն. «Տե՛ր, մի՞թե Քո Անունով զորավոր գործեր չարեցի, մի՞թե Քո Անունով չմարգարեացա, մի՞թե այս ամենն ես քո Անունով չարեցի»»: Իսկ Հիսուսն ասաց. «Ինձանից հեռո՛ւ գնացեք, դո՛ւք՝ անօրենություն գործողներ, երբեք ձեզ չեմ ճանաչել»: Հասկանո՞ւմ եք, եղբայրս, քույրս, թե ինչու եմ այդպես դատապարտում և մեղադրում այս սերունդը: Դուք կարող եք լեզուներով խոսել մարդկանց և հրեշտակների նման, կարող եք եկեղեցով մեկ Հոգով պարել, դա ոչ մի կապ չունի Դրա հետ:

70 Ես տեսել եմ, թե ինչպես են մահմեդականները այդպես պարում: Լսել եմ շամանի...կախարդների ճամբարում տեսել եմ, թե ինչպես են վհուկները կանգնում և լեզուներով խոսում, և մեկնաբանում դա, և ճշգրտորեն ասում, թե ինչ է կատարվելու և այդպես էլ լինում էր: Նույնիսկ տեսել եմ, թե ինչպես է մատիտը կանգնում և անծանոթ լեզվով գրում, և այնտեղ միայն մեկը կարողացավ կարդալ դա, և սատանայից էր: Դուք չեք կարող ձեր հավիտենական կոչումը հիմնել զգացմունքների վրա: Սատանան այդ զգացմունքներից ցանկացածը կարող է մարմնավորել: Ոչ թե...Կարևորը՝ Քրիստոսին ճանաչելն է, ինչ-որ բան փոխվում է ձեր կյանքում: Քննե՛ք ձեր կյանքը և համեմատե՛ք այն Խոսքի

հետ, և տեսեք, թե որտե՞ղ եք գտնվում, գույքագրում կատարելով, անշուշտ:

71 Չնայած այս բալոր նմանակումներին, կեղծ ձայներին, սուտ մարգարեներին, մնացած այս մյուս բաներին, որոնք վեր են ելնում, Հիսուսն ասել է, չնայած այս ամենին. «Եթե մեկը լսի Իմ Ձայնը և Իմ հետևից գա»: Նա է Խոսքը: Ականջ դրե՛ք Նրա պատվերին, որն ուղղված է մեզ այսօր այս բոլոր ձայների մեջ: Որոնք, ինչպես ասացի, ժամեր կպահանջվեր այդ բոլոր ձայնները երևան հանելու համար: Եվ դա խառնաշփոթություն է առաջացնում մարդկանց մեջ, ինչը տխուր է: Եվ, ի վերջո, ձեզ երկրորդ հնարավորություն չի տրվի, հիմա պետք է Դա ընդունեք: Այս գիշեր կարող է արդեն հնարավորություն չունենաք: Վաղը կարող է արդեն հնարավորություն չունենաք: Հիմա է: «Երբ Իմ Ձայնը լսեք, մի՛ խստացրեք ձեր սրտերն ինչպես որ բարկացնելու ժամանակումը: Հիմա է ժամանակը: Հիմա է ընդունելու պահը, որ եթե մեկը լսի Իմ Ձայնը»: Դա ասում է այն բանի մասին, որ Նրա Ձայնը դեռ հիմա էլ այնտեղ է լինելու՝ այս ամբողջ քաոսի մեջ: Նա դեռևս Ձայն ունի: Ինչո՞ւ: Նրա Ձայնը մնալու է հավիտյան: Ահա. «Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Իմ Ձայնը չի անցնի», Իր Խոսքը:

72 Եկե՛ք վերցնենք արագ ևս հինգ րոպե: Կարո՞ղ եք, այդքան կմնա՞ք, կամ մի քանի րոպե: Եվ այսպես, ես կարագացնեմ: Եկե՛ք վերցնենք որևէ մեկին, ով լսեց այս Ձայնը և հնազանդվեց Դրան: Այն ինչպե՞ս մղեց նրանց վարվել, ի՞նչ դրդեց անել: Ես հիմա այստեղ մի շարք Սուրբգրային համարներ եմ բաց թողնելու, պարզապես ձեզ անմիջապես հասցնել, թե Դա ինչպես փոխեց իրենց կյանքը և բոլոր նրանց, ովքեր շրջապատում էին իրենց. ինչպես էին նրանք «տարօրինակ» դառնում, մենք «տարօրիկան» ենք ասում: Ցանկացած մարդ, ով հավատացել է Աստծուն, տարօրինակ է համարվել: Որովհետև, եթե դուք աշխարհիկ ընթացքի մեջ եք, ինչ–որ բան այն չէ ձեզ հետ: Քրիստոնյա լինելու համար տարօրինակ պետք է լինել: «Որովհետև բոլոր Քրիստոս Հիսուսի մեջ աստվածապաշտությամբ ապրող կյանքով մարդիկ հալածանք պիտի կրեն աշխարհի կողմից: Նա աշխարհի մեջ էր, և աշխարհը Նրանով եղավ, և աշխարհը Նրան չճանաչեց»: Հիմա արագ, ուշադիր լսեք, քանի որ ավարտում ենք:

73 Ադամը երեկոյան զով պահին լսում էր Աստծո

Ձայնը և հաղորդակցվում էր Նրա հետ: Նրա համար դատապարտություն չկար: Ադամը լսում էր Աստծո Ձայնը և ասում. «Հա՛յր, ես հիմա պառկում եմ քնելու»: Եվ պառկում էր քնելու, Եվան էլ իր բազուկին, առյուծները, վագրերը և վայրի գազանները պառկում էին անմիջապես իրենց շուրջը, ոչ մի վնաս չկար, հիվանդանալու ոչ մի ձև չկար, անհանգստանալու պատճառ չկար, թե արդյո՞ք առավոտյան արթնանալու են, թե՞ ոչ, նրանք արթնանալու էին: Ադամը լսում էր Նրա Ձայնը այնպես, ինչպես պետք է լսեր:

74 Բայց մի օր նա լսեց իր կնոջ ձայնը: Ավելի լավ է դա որոշ ժամանակով թողնեմ: Նա սխալ ձայնի ականջ դրեց, չնայած դա իր կինն էր՝ ամենասերտ կապը, որն ուներ երկրի վրա: Ինչո՞ւ նա Հոբի նման չասաց. «Մի անմիտ կնոջ պես ես խոսում»: Եթե այդպես լիներ, ամբողջ մարդկությունը մեռնելու փոխարեն կապրեր: Դա փոխեց մարդկության և ժամանակի ընթացքը: Բայց նա լսում էր Աստծո Ձայնը, շփվում էր Դրա հետ, բայց երբ նա դարձավ...Ադամն ինչպե՞ս իմացավ, որ իր կինը սխալ է: Հիշո՞ւմ եք, այն հաճելի էր:

75 Մենք այսօր կարծում ենք, որ մեր կազմակերպությունը, եկեղեցին, որ մեր ներկայիս բարգավաճումը Աստված է, Ով ժպտում է մեզ: Թվում է, թե լավ է: Լավ էր թվում, երբ Միքիան կանգնած էր այնտեղ չորս հարյուր մարգարեների առջև, և ամբողջ երկիրն իրենց էր պատկանում, և փղշտացիներ, թե սիրիացիներ էին այնտեղ, լավ էր թվում: Այդ մարգարեներն ասում էին. «Գնա՛, այն մեզ է պատկանում: Նվաճի՛ր այն»: Բայց դա Աստծո Ձայնը չէր: Եվ Միքիան դարձավ և անիծեց այդ ձայնը: Այդ ինչպե՞ս նա գլխի ընկավ անել դա: Որովհետև նրա տեսիլքը ճիշտ Խոսքին համապատասխան էր: Այսօր սա միակ միջոցն է վստահել դրան և տեսնել դա, այն պետք է հենվի Խոսքի վրա:

76 Հետո ուշադրություն դարձրե՞լ եք: Այն բանից հետո, երբ Ադամը ուրիշ ձայնի ականջ դրեց, Աստծո Ձայնից բացի, իր սեփական կնոջ...Եվ եկեղեցին էլ է ականջ է դնում իր կազմակերպության ձայնին՝ Աստծո Խոսքի փոխարեն հավատամքներ մտցնելով նրանց մեջ, թույլ տալով իրենց ապրել այնպես, ինչպես ուզում են: Քանի դեռ նրանք եկեղեցի են հաճախում և ինչ-որ եկեղեցու անդամ են, դա է այն ամենը, ինչ նշանակություն ունի: Նրանց համար ամենասերտ կապը, որ հավատացյալն

ունի երկրի վրա՝ եկեղեցին է: Բայց հավատացյալի՝ իսկական հավատացյալի համար ամենասերտ կապը Սուրբ Հոգին է, Աստծո Խոսքն է:

77 Այսպիսով, տեսնո՞ւմ եք, որ Ադամը գիտակցեց իր վիճակը և լսեց Աստծո Ձայնը, որ դարձյալ կանչում էր, և այդ ժամանակ նա թզենու տերևների մեջ էր: Դա դատապարտության Ձայն էր՝ «Ինչո՞ւ դա արեցիր»:

78 Հետաքրքիր է, արդյո՞ք Ամերիկան գիտակցում է այսօր, կամ աշխարհն իր կրոնական աղմուկի մեջ, կարծես Ամերիկան էլ է կուլ տալիս, կուլ է գնում, շատ շուտով դա վերածվելու է ազգային կրոնի: [Դադար ժապավենի վրա: Ծան.խմբ.]:

79 Ո՞վ է նստած իմ առևում: Գիտեմ, որ սա ձայնագրվում է և գնալու է աշխարհով մեկ: Մենք ունենք ձայնագրությունները տարածելու ձրագիր, ըստ որի յուրաքանչյուր Պատգամը շրջում է ամբողջ աշխարհով, մյուս բոլոր երկրներով:

80 Բայց եթե նայեք և տեսնեք, դուք կանգնած եք հենց թզենու տերևների մեջ; Երբ Աստծո ճշմարիտ Ձայնը դուրս է գալիս, նրանք չեն իմանում ինչ անեն դրա հետ: Այն շփոթմունք է առաջացնում, նրանք չգիտեն, թե ի՞նչ անեն:

81 Արագ, Նոյը լսեց Աստծո Ձայնը: Այն պատրաստում էր նրա կյանքը փրկելու, և նա հետևեց հրահանգներին և կանգնեց:

82 Եթե մարդ լսում է Ձայնը...Այժմ լսե՛ք, շատ ուշադիր լսե՛ք: Բաց մի՛ թողեք: Եթե մարդ լսում է ինչ–որ մի բանի Ձայնը, և եթե հաստատվում է, որ Դա Աստծո Ձայնն է, որը ժամանակին է, և հետո դա դուրս է գալիս մարդուց, երկինքն ու երկիրը կանցնեն, բայց այդ Խոսքը չի անցնի:

83 Նոյը լսեց այդ Ձայնը և դատապարտեց աշխարհը: Իսկ նրանք ծիծաղում էին նրա դեմքին, որովհետև նրա, նրա պատգամը չէր համապատասխանում իրենց գիտական ձեռքբերումներին, բայց անձրևը եկավ և կործանեց ամբողջ աշխարհը: Հասկանո՞ւմ եք: Նրա Ձայնը, որ դուրս եկավ...այնտեղ սերմ կար: Յուրաքանչյուր ժամանակաշրջանում այդպես է եղել:

84 Սամուելն անհանգստացավ, երբ լսեց Աստծո Ձայնը, որ ինքը...գնա և դատապարտի Հեղիին, մի մարդու, ով մեծացրել էր իրեն: Մարդ, ով նրա համար հայր էր եղել, մեծացրել և դաստիարակել էր իրեն:

85 Ծառայո՛ղ եղբայրներ, թույլ կտա՞ք: Ծառայողները, ովքեր հաճախ հիմնվում են իրենց հարանվանական հիմքերի և հավատամքների, իրենց գրպանում եղած լիազորությունների վրա, որ հենց այդ նույն հայրիկից են, հենց այդ նույն կազմակերպությունից, որ սնուցել, դաստիարակել և մեծացրել է իրենց, եկեղեցական պաշտոնական դիրքի է դրել և տեղադրել հավաքույթներում, դուք պետք է մերժեք այն, ինչ նրանք ուսուցանում են: Հասկանո՞ւմ եք: Ինչ սարսափելի բան կլիներ Աստծո իսկական մի ծառայի համար լսել Աստծո Ձայնը և ստիպված լինել վերադառնալ այդ նույն մայր կազմակերպության մոտ և ասել. «Դու դատապարտված ես այս Խոսքը չընդունելու համար»: Ահա այդպիսի բաներ:

Սամուելի համար դժվար էր, բայց նա մարգարե էր, պետք է դա աներ: Անկախ նրանից վիրավորելու էր դա, թե ոչ, նա պետք է դա աներ:

86 Մովսեսը լսեց Աստծո Ձայնը: Նա լցված էր աստվածաբանությամբ: Գիտեր ամենը *ներսից* և *դրսից* բայց դա ձախողվեց: Նա լսեց Աստծո Ձայնը, Մովսեսն այլևս առաջվանը չէր:

87 Եվ ոչ ոք այլևս առաջվանը չի լինի: Գուցե ձեր ականջներում դուք լսում եք Ձայնը, որ խոսում է, բայց երբ խոսող Ձայնը ձեր սրտում լսեք, հասկանո՞ւմ եք, այդ ժամանակ է, որ դուք կլսեք: Աչքերով չեն տեսնում՝ աչքերով նայում են, սրտով՝ տեսնում: Դուք ինչ-որ բան տեսնում եք, ասում եք. «Ես ուղղակի դա չեմ պատկերացնում», ի նկատի ունեք, որ դուք դա չեք հասկանում: Ականջներով չեն լսում, լսում են սրտով: Հաճախակի ձեր ականջները լսում են Աստծո ճշմարիտ Ձայնը, բայց Այն հոսելով թափվում է ձեր վրայից, այնպես, ինչպես ջուրը բադի վրայից: Բայց, երբ իրոք լսում եք, լսում եք սրտով:

88 Եվ ամբողջ աստվածաբանությունը, որ Մովսեսն ուներ, նա չէր լսում Աստծո Ձայնը: Բայց մի օր Աստված մի կողմ կանչեց այս ութսուն տարեկան հովվին և խոսեց նրա հետ, և նա հասկացավ: Նա հաստատեց, որ Ինքը Աստված է: Առաջին բանը, որ Նա Մովսեսին արեց՝ հաստատեց Իր Խոսքը. «Ես գնում եմ Եգիպտոս, Ես հիշում եմ Իմ խոստումը»:

89 Եվ ահա թե ինչ է Նա խոստացել այս վերջին

օրերի համար՝ Նա հեթանոսների մեջից մի ժողովուրդ է բարձրացնելու, և բոլոր խոստումները։

90 «Ես խոստացել եմ սա,— ասաց,— Մովսե՛ս, հանի՛ր կոշիկներդ»։ Այլ կերպ ասած՝ պատվի՛ր Այն։ «Հիմա գետնի՛ն գցիր գավազանդ»։ Եվ անապատի չոր փայտը օձ դարձավ, Մովսեսը բռնեց այն, և այն կրկին վերադարձավ իր սկզբնական վիճակին։ Հասկանո՞ւմ եք։ Նա գիտեր, որ դա Աստված է, որովհետև Աստված ասաց, Աստծո Խոսքը, Խոսքը, որ ասում էր Նա, ասաց. «Քո ձեռքի գավազանը գետի՛ն գցիր»։ Դա Աստծո Խոսքն է։ Մի՛ փորձեք նույն բանն անել, դա ձեզ ուղղված Աստծո Խոսքը չէ, դա Աստծո Խոսքն է, որ ուղղված էր Մովսեսին։ *Միա՛* Աստծո Խոսքը ձեզ համար։ «Գետի՛ն գցիր գավազանը»։ Այն օձ դարձավ։ Ասաց. «Ի՞նչ է, վախենո՞ւմ ես նրանից։ Բրնի՛ր դրա պոչից», և օձը գավազան դարձավ։ Աստծո Խոսք, որն ուղղված էր իրեն։ Ի՞նչ արեց Աստված։ Հաստատեց Իր Խոսքը։

91 Մի քանի ամիս առաջ այստեղ, մոտ, օ՛հ, մոտ մեկ տարի, մեկ տարուց ավել մի հեռախոսազանգ ստացա։ Հեռախոսակապի մյուս կողմում մի տիկին էր, մկրտական և հոգեգալստական քարոզիչների հետ։ Նա ասաց. «Եղբա՛յր Բրանհամ, Աստված ինձ մարգարեուհի է դարձրել»։

Ասացի. — Շատ լավ է։

92 Ասաց. — Գիտե՞ք, ինձ ասել են, որ դուք ասել եք, թե վկայություն կտաք, որ իմ ծառայությունն Աստծուց է։

93 Դե, ես դա չէի կարող արած լինել, դա Խոսքին հակառակ է։ Դրա համար ասացի. «Տիկի՛ն, դա սխալմունք է։ Ես նույնիսկ ձեզ չեմ ճանաչում»։

94 Եվ մկրտական քարոզչը, ես լսել եմ նրան, լսել եմ նաև հոգեգալստական քարոզչին։ Այդ կինն ասաց. — Դե՛, ես այստեղ ժողով եմ անցկացնում,— ասաց,— Տերը մեծ գործեր է անում»։

95 Ասացի. — Ես երախտապարտ եմ դրա համար։ Նա ասաց…ես հարցրեցի. «Երբևէ ձեզ էլի որևէ բան ասե՞լ է»։

Ասաց. — Այո՛, ես իմ ձեռքում մի մեծ ձրագիր ունեմ։

96 Ասացի. — Հրաշալի է։ Հարցրեցի. «Ո՞րն է ձեր ձրագիրը։ Տերն ի՞նչ է ձեզ ասել»։

97 Նա ասաց. «Գնա՛ Ֆինիքս՝ Արիզոնա նահանգ *կոնկրետ ամսաթվին,* իսկ հետո Ես քեզ կտամ

հոլանդացիների կորած ոսկու հանքը, և դու կառնես ոսկին, որը հայտնաբերվելու է այնտեղ և կհովանավորես միսիոներներին ամբողջ աշխարհով մեկ»: Երբ բոլորիս հայտնի է, որ հոլանդացիների կորած հանքի մասին պատմությունը լեգենդ է: «Նա այդպես ասաց»:

98 Ասացի. «Դե ինչ, ես կասեմ, թե ինչպես պարզել, արդյո՞ք դա Աստվածանից է, թե ոչ»: Ասացի. «Այդ օրը եղեք այնտեղ: Եվ եթե դա դուք եք լինելու, ով գտնելու է հոլանդացիների կորած հանքը, որեմն դա Աստվածանից է: Բայց եթե չգտնեք հոլանդացիների կորած հանքը, այդ ժամանակ ապաշխարե՛ք և դուրս վոնդեք այդ սուտ ոգուն ձեզանից»: Ահա թե ինչպես պարզել, արդյո՞ք դա Աստվածանից է, թե ոչ:

99 Աստված ասաց. «Մովսե՛ս, գետի՛ն գցիր գավազանը և այն օձ կդառնա: Նա արեց դա»: Ասաց. «Բարձրացրո՛ւ այն և դա կրկին գավազան կդառնա»: Նա արեց դա:

100 Երբ Աստված այս վերջին օրերում ծառայության խոստում է տալիս, Նա հաստատելու է դա ճիշտ այնպես, ինչպես ասել է, որ անելու է դա: Այդ ժամանակ դուք գիտեք, որ ճիշտ Ձայնն ունեք: Ճիշտ Բանին եք ականջ դնում, որովհետև Խոսքն է հաստատվում: Հասկանո՞ւմ եք: Օ՜հ, որքա՜ն...Ներեցե՛ք, ես...Լավ:

101 Մովսեսն այլ կերպ գործեց: Տեսե՛ք, թե ինչ զավեշտալի բան արեց Մովսեսը: Եվ այսպես, միշտ, երբ Աստծո Ձայնին ես հետևում, դու աշխարհի համար խենթ ես: Հաջորդ օրը տեսնում ենք Մովսեսին, կնոջ հետ ջորու վրա նստած և երեխան ծնկներին, դա հարավային բառ է «young'n», երեխան ծնկներին գնում են: Այս ծերուկը մորուքն *այսպես* կախված և նրա ճաղատ գլուխը փայլում էր, փայտը ձեռքին գնում են, էշուկին առաջնորդելով ամբողջ ուժով գնում է ուղիղ դեպի Եգիպտոս: Ինչ-որ մեկը հարցրեց. — Մովսե՛ս, այդ ո՞ւր ես գնում:

102 — Գնում եմ Եգիպտոսը նվաճելու: Որտեղ նա որպես երիտասարդ ձախողվել էր, ձախողվել էր որպես զինվորական, բայց ահա նա գնում էր նվաճելու այն: Եվ նա արեց դա: Ինչո՞ւ: Նա լսեց Աստծո Ձայնը և տեսավ, Դա հաստատված իր օրվա համար՝ այն բաների համար, որոնք պետք է լինեին իր օրոք, նա տեսավ դա:

103 Պողոսը՝ ինքնակոչ փարիսեցին, որքան հնարավոր է լի աստվածաբանությամբ, բայց մի օր նա լսեց Աստծո Ձայնը: Տեսավ Կրակի Սյունը և հասկացավ, որ այնտեղ մի

բան այլ էր: Դա փոխեց իր կյանքը: Կարևոր չէ, թե քանի փարիսեցի, թե քանի Գամաղաելներ կամ էլի ինչ–որ մեկը կարող էին աղաղակել Պողոսին, ասելով. «Դու սխալ ես, դու սխալ ես»: Պողոսը լսել էր Աստծո Ձայնը, նա գիտեր, որ Դա Ճշմարտություն է:

104 Պետրոսը, կրոնասեր, որքան հնարավոր է, պահում էր ծերերի ավանդույթները, նա ոչ մի միս չէր ուտում: Ո՛չ, պարոն: Նա դրա հետ բացարձակապես ոչ մի ընդհանուր բան չէր ուզում ունենալ: Նա իսկապես պահում էր ծերերի ավանդույթներն ուղիղ Խոսքին համապատասխան: Ի՞նչ կատարվեց: Մի օր նա լսեց Աստծո Ձայնը. «Մի՛ համարիր դա պիղծ կամ անմաքուր, երբ Ես մաքրում եմ»: Նա փոխված մարդ էր: Պատրաստ էր գնալ ամենուր, ուր Տերը նրան ուղարկում էր:

105 Ավարտելով կարող եմ սա ասել: Մի մարդ կար, ով հավատացյալ էր: Նա չորս օր մեռած էր: Գերեզմանոցում էր, հոտում էր, նեխած էր, բայց նա լսեց Աստծո Ձայնը, որն ասաց.«Ղազարո՛ս, դո՛ւրս արի»: Եվ եթե Նա մահացած մարդուն, ով մերած և նեխած էր գերեզմանից դուրս բերեց, ի՞նչ է անելու եկեղեցու հետ, ով դեռ կյանք ունի իրենում: Այն պետք է հարություն տա իրենց, այս բոլոր ձայների խառնաշփոթության մեջ, որոնց մասին մենք խոսեցինք՝ կրոնական, քաղաքական, Հոլիվուդը, բոլոր կեղծ մարգարեությունները և նման բաներ, որոնք ի հայտ են եկել: Այս ամենի մեջ, Աստծո ճշմարիտ Ձայնը մեղքի և հանցաքների մեջ մեռած մարդուն դարձյալ կյանքի է կոչելու: Նա պետք է վերցնի նահանջած եկեղեցուն և դարձյալ կյանքի կոչի: Անկասկա՛ծ:

106 Հիշե՛ք, ավարտելով սա կասեմ, իսկ հետո կավարտեմ: Հիսուսն ասաց. «Ժամանակ կգա, երբ բոլոր նրանք, ովքեր գերեզմանում են, Աստծո Ձայնը կլսեն»: Եվ դուք Այն կլսեք: Կարևոր չէ, թե ինչ իրավիճակում եք գտնվում, միևնույն է, կլսեք: Եվ նրանցից ոմանք, ովքեր գերեզմանից դուրս են գալու, գալու են դատապարտության: Նրանք կլսեն Ձայնը, բայց Այն դատապարտող Ձայն կլինի: Եվ եթե այսօր դուք լսում եք Այն. «Այսօր, այսքան ժամանակ անց, երբ լսում եք Իմ Ձայնը, մի՛ կարծրացրեք ձեր սրտերը, ինչպես արեցիք փորձության օրերին»: Եվ եթե դուք՝ հոգեգալստականներդ, կրկին խմբավորվում եք հավատալիքների մեջ, աշխարհիկության մեջ՝ «Աստվածապաշտության կերպարանքն ունենալով,

բայց դրանում եղող Զորությունն ուրանալով», մինչև հարության օրը հարություն առնելը՝ դատապարտության համար, որովհետև Աստծո Զայնը, որ այս պահին խոսում է ձեզ հետ Խոսքի միջոցով, այն օրը դատապարտելու է ձեզ։

107 Եթե դու ընդհամենը գաղջ հավատացյալ ես, այս առավոտ Աստծո Զայնն աղաղակում է քո սրտում. «Դու գաղջ հավատացյալ ես», ավելի լավ է ապաշխարես։

108 Դուք՝ տղամարդիկ, կանայք, աղջիկներ և տղաներ, որ չեք ապրում Քրիստոսի համար, Աստծո Զայնը Իր Խոսքի միջոցով խոսում է ձեզ հետ և ասում՝ «վերջ տուր դրան»։ Ավելի լավ է այդպես անեք։ Որովհետև մի օր Այն նորից կլսեք, և Նա կդատապարտի ձեզ։ Դուք չեք կարող Այն հերքել, Նա հիմա խոսում է ձեզ հետ։ Եվ հիշե՛ք, սա ձայնագրվել է։

109 Եվ նրանք, ովքեր ճիշտ են վարվում և լսում են Նրա Զայնը, հարություն են առնելու ի արդարության, ի Փառք, ի Երկինք։

110 Այսպիսով, դուք մի օր Աստծո Զայնը կլսեք։ Գուցե այս առավոտ Այն հազիվ լսելի ձայնով ասում է ձեր սրտում, որ պետք է հետ դառնաք այն ճանապարհից, որով ընթանում եք, դառնաք Աստծուն։ Այժմ հիշե՛ք, այն Զայնը, որ խոսում է ձեր սրտի հետ ձայնագրվում է Երկնքում։ Եվ մի օր, երբ Հիսուսը կանչի և բոլորը, ովքեր գերեզմանում են, բոլորը՝ արդարներն ու անարդարները, հարություն են առնելու։ Եվ այն ժամանակ հենց այս նույն Զայնը շշնջալու է ձեզ. «Արիզոնա նահանգի Ֆենիքս քաղաքում, կիրակի *մի* առավոտ, երբ ծառայողը ձեզ այդքան երկար պահեց՝ Զայների վերաբերյալ խոսելով, Ես խոսեցի ձեզ հետ, ասացի ձեզ՝ կանանց. երկարեցրե՛ք ձեր մազերը, դադարե՛ք անբարոյական ձևով հագնվել, ասացի ձեզ՝ տղամարդկանց. վերջ տվեք սուտ խոսելուն, ծխելուն, ասացի ձեզ՝ քարոզիչներին. վերադարձե՛ք Աստծո Խոսքին»։ Հասկանո՞ւմ եք, թե ինչ եմ ուզում ասել։ Ճիշտ է։

Այդ մեղմ Զայնն ասում է. «Դա կարող է ճիշտ լինել»։

111 Եթե ես ստիպված լինեի գալ Նիկոդեմիոսի նման, ես դեռ հիմա էլ կփորձեի ընկնել այնտեղ։ Ես կգնաի Նրա մոտ, և դուրս կգաի այստեղ՝ ինչ-որ տեղ, անապատում և կասեի. «Տե՛ր Աստված, ահա ես, փոխի՛ր ինձ հիմա։ Զուլի՛ր ինձ Քո ձևով»։ Վերադարձե՛ք Խոսքին։ Ինչ-որ

տեղ եթե տեսնում եք, որ դուրս եք գալիս Խոսքից, վերադարձե՛ք անմիջապես դրան, որովհետև շղթան ամուր է այնքան, որքան նրա ամենաթույլ օղակը: Եվ ամենուր՝ ձեր կյանքում, որտեղ թողել եք Աստծո պատվիրանը՝ ավանդույթներին ծառայելու համար, հենց այնտեղ է ձեր շղթան պոկվելու, կարևոր չէ, թե ինչքան ամուր եք մնացած բաներում: Բռնե՛ք Աստծո անփոփոխ ձեռքը:

112 Աղոթենք: Այսօր, այսքան երկար ժամանակից հետո, Տե՛ր, Դու ասացիր, որ խոսելու ես, գրելու ես Քո օրենքները սրտերի տախտակների վրա: Ես չգիտեմ, թե ինձ ինչ է ասասվում առջևում: Միակ բանը, որ կարողանում եմ անել, այն է՝ վերցնել Քո Խոսքը և տարածել, անշուշտ, Այն ընկնելու է ինչ-որ տեղ քարերի տակ: Ես խնդրում եմ, Տե՛ր, որ խոսես յուրաքանչյուր երիտասարդի, յորաքանչյուր միջին տարիքի, մեծահասակի հետ, ով էլ լինի: Խոսիր իմ սրտի հետ, Տե՛ր: Խոսիր այս ծառայողների սրտերի հետ: Խոսի՛ր հավաքվածների սրտերի հետ:

113 Մենք խնդրում ենք, Հա՛յր, որ լսենք Քո Ձայնն այսօր: Եվ մենք գիտենք, որ ինչպես Սամուելի օրերում հայտնի տեսիլքը հազվագյուտ էր, և դա վախեցնում էր մարդկանց, այդպես էլ այսօր է: Մենք ունենք երազներ և երազատեսներ, ունենք խոսողներ և մեկնաբաններ, բայց հայտնի տեսիլքը, որ գալիս է Տիրոջ Խոսքի հետ միասին, և ուղղում է...Երկնայի՛ն Հայր, մենք խնդրում ենք, որ այն Ձայնը, որ աղաղակում էր անապատում. «Պատրաստեցե՛ք ճանապարհը Տիրոջ համար», հավատում ենք, որ Սուրբ Հոգին այդ Ձայնը կրկին է տալիս. «Պատրաստվեցե՛ք Տիրոջ գալուստին»: Եվ որքան տարօրինակ է Նա, որովհետև այնքան շատ այլ ձայներ կան Դրան խլացնելու և դուրս մղելու համար, բայց Դա փառահեղ է նրանց ականջներում, ովքեր լսում են Այն: Խնդրում եմ, որ հիմա Սուրբ Հոգին աշխատանք կատարի մեր բոլորի սրտերում:

114 Եվ մինչ մենք խոնարհել ենք մեր գլուխները, և ես հավատում եմ, որ մեր սրտերը խոնարհած են... եթե գիտեք, որ ինչ-որ տեղ անհնազանդություն եք ցուցաբերել ձեր կյանքում, գիտեք Սուրբգրային որոշ համարներ, գիտեք, որ Աստվածաշունչն է ուսուցանում, որի հետ դուք չեք համագործակցել, որովհետև ինչ-որ բան՝ Հոլիվուդյան ձայնը ձեզ մղել է այլ կերպ գործել:

Ինչ-որ մի տեղ, որը դուք՝ սպասավորներդ գտել եք Աստվածաշնչում, որն իրականում Ճշմարտություն է, բայց դուք գիտեք, որ ձեր կազմակերպությունը ձեզ դուրս է վոնդելու, եթե Դա ուսուցանեք, և գիտեք, որ Դա բացարձակ Ճշմարտություն է: Խոսքս ուղղված է ձեզ, մարդիկ, ովքեր սխալ բան են ընտրում և սխալ կյանքով ապրում: Դուք՝ ծնողներ, որ չեք փորձում ուղղել ձեր երեխաներին, չեք փորձում դաստիարակել նրանց: Գուցե դուք փորձում եք անել լավագույնը, իսկ նրանք միևնույն է աշխարհիկ ձևով են ընթանում, բայց դուք եք նրանց օրինակ տալիս: Եվ եթե դուք դա չեք անում, Աստծո Ձայնը խոսում է ձեզ հետ՝ ասելով. «Մի՛ վարվեք այդպես»:

115 Իսկ այժմ խոնարհած գլխով և փակած աչքերով, և թող Երկնային Աստվածը նայի վերևից այն մարդու սրտին, ով քաղցած է և գտնի այն տեղը, որտեղ նրանք սխալ են: Եվ առ Աստված պարզած ձեռքով՝ ասի. «Տե՛ր, ես իսկապես փափագում եմ, որ Քո Ձայնը դուրա հանի ինձանից ողջ անհավատությունը և բոլոր այն բաները, որոնք հաճելի չեն Քեզ, և դարձրու ինձ այնպիսին, ինչպիսին, Դու ուզում ես, որ ես լինեմ»: Չէի՞ք բարձրացնի ձեր ձեռքը, մինչ դուք...Տերն օրհնի: Աստված օրհնի ձեզ:

116 Հետո Աստվածաշնչում է ասվում, Հիսուսն է ասում, չնայած բոլոր այս մյուս ձայներին. «Բայց եթե մարդ լսի Իմ Ձայնը»: Հետևեք Նրան, և դուք կստանաք ձեր փափագը:

117 Տե՛ր, ժամանակը սպառվում է, բայց Աստվածաշունչն է ասում՝ «Բոլոր նրանք, ովքեր հավատացին, մկրտվեցին»: Երկնայի՛ն Հայր, ես խնդրում եմ, որ ձեռք բարձրացնողներից յուրաքանչյուրը ճշմարիտ խոստովանությամբ, որ Աստծո Խոսքը, որ նրանք կարդացին, և հասկացան, որ իրենք սխալ են եղել: Ես չեմ տեսել անգամ նրանց մի մասը: Դա ես չէ, որ պետք է տեսնեմ, այլ Դու, Տե՛ր: Դու գիտես շարժառիթն ու դրդապատճառը, որն այդ բարձրացրած ձեռքի ետևում է գտնվում: Թող նրանք հենց այս ժամից սկսած նպատակ դնեն իրենց սրտում՝ «Հենց այսօրվանից, հետայսու ես կընդունեմ Աստծո Խոսքը և Աստծո Ձայնը և կհետևեմ Նրան, ինչքան էլ թանկ նստի դա ինձ վրա»: Եվ գնալիս, պահեն իրենց մտքում բանաստեղծի երգը. «Պետք է արդյո՞ք Հիսուսը խաչը մենակ տաներ բոլորի փոխարեն: Ո՛չ, խաչ կա ամեն մեկի համար, խաչ կա ինձ համար: Եվ այս օծյալ խաչը ես կտանեմ, մինչև այս մարմնից բաժանվեմ»: Հետո, երբ որ Աստծո Ձայնը հնչի. «Ես դուրս

կգամ Նրա արդարության մեջ, որովհետև հետևեցի Նրա Ձայնին՝ Նրա Խոսքի Ձայնին»: Հիմա ես հանձնում եմ նրանց Քեզ, Տե՛ր, Հիսուս Քրիստոսի Անունով:

118 Այժմ, մինչ խոնարհել ենք մեր գլուխները, դուք անում եք ձեր խոստովանությունն ու երդումը: Ինձ ապշեցրեց մի փոքրիկ տղա, ով նստած է այստեղ, ծոմոելով գլուխը: Եվ կա Ձայն եկեղեցու համար. «Ես եմ քո բոլոր հիվանդությունները բուժող Տերը»: Դա Ձայն է, որ եկեղեցու մեջ է: Եվ դուք բոլորդ, որ բժշկության կարիք ունեք, և ապրում եք Աստծո յուրաքանչյուր Խոսքին նվիրված կյանքով, որը դուք գիտեք, որ ճշմարիտ է, և դուք բժշկության կարիք ունեք, ես կուզեի իմանալ, թե արդյո՞ք պարզապես չէիք բարձրացնի ձեր ձեռքը: Բարձրացրե՛ք ձեր ձեռքը՝ ասելով. «Տե՛ր, ես բշժկության կարիք ունեմ»: Շատ լավ:

119 Այժմ պահե՛ք այդ Ձայնը ձեր սրտում՝ «Ես եմ քո բոլոր հիվանդությունները բուժող Տերը»: Հիշե՛ք, երբ Խոսքն ասված է, Դա պետք է իրականանա: Հիսուսն է ասում Մարկոս Ավետարանի 11.22–ում. «Եթե դուք ասեք այս սարին. «Շարժվի՛ր», և չկասկածեք ձեր սրտում, այլ հավատաք, որ ձեր ասածը կկատարվի, ապա կստանաք այն, ինչ ասացիք»:

120 Հիմա ամեն մեկդ ձեր ձևով խոնարհեք ձեր գլուխը, և արեք ձեր խոստովանությունը. «Տե՛ր, ես հավատում եմ Քո Խոսքին: Լսում եմ Քո Ձայնը, որ ասում է ինձ, որ Դու նույնն ես երեկ, այսօր և հավիտյան»: Ես պատրաստվում եմ իջնել և ձեռքերս դնել այս երեխայի վրա, որովհետև նա չափազանց փոքր է իմանալու, թե ինչի համար է այս ամենն արվում, թանկագին փոքրիկ տղա, տարիքով և չափով համարյա իմ փոքրիկ Հովսեփի չափ է: Եվ ես ուզում եմ, որ դուք բոլորդ աղոթեք՝ ասելով. «Տե՛ր, ես լսում եմ Քո Ձայնը, ես հավատում եմ»:

121 Երկնայի՛ն Հայր, մենք այս լսարանը Քեզ ենք բերում՝ իրենց մարմնի բժշկության համար: Եվ, Տե՛ր, ահա խեղճ փոքրիկ մի երեխա է նստած, ով գրավում էր իմ ուշադրությունը Պատգամի ամբողջ ընթացքում, տեսնում էի, թե ինչպես ծնողն այնտեղ նստած բռնել էր այդ փոքրիկին: Բժշկական գիտության տեսանկյունից նրա համար հույս չկա: Բայց Աստծո Ձայն կա, որ հաղթում է ամեն բան: Եվ քանի որ այս եկեղեցին միաբանվել է, որպեսզի կատարի յուրաքանչյուր պարվիրանը, որ ես

գիտեմ, թե ինչպես անել, մնացածը Քո գործն է, Հա՛յր։ Ես ինջնում և ձեռքերս դնում եմ այդ երեխայի վրա։

122 Հա՛յր Աստված, Հիսուս Քրիստոսի Անունով, ես դատապարտում եմ սա։ Թող Աստծո զորությունը, Աստծո բժշկարար...Թող հաջորդ հինգ րոպեի ընթացքում այնպիսի փոփոխություն լինի նրան մեջ...թող նրանք բոլորը...Քո փառքի համար։

123 Երկնայի՛ն Հայր, Դու խոստում ես տվել։ Դա է՝ այն ամենը, ինչ ես գիտեմ, Դու խոստում ես տվել։ Արվել է այնպես, ինչպես ասվել է. «Եթե *ասեք* այս», և ես ասում եմ ամեն հիվանդության կամ ցավի դևին, որ կապում է այս լսարանը, կապում է այս մարդկանց, ամեն անհավատության ոգուն, ասում եմ. «Հեռացի՛ր այս մարդանցից Հիսուս Քրիստոսի Անունով»։ Եվ այսպես, մենք գիտենք, որ դա գրված է, և հիմա դա ասվեց, թող դա կատարվի Աստծո պատվի և փառքի համար։ Եվ սա խնդրվեց Հիսուս Քրիստոսի Անունով։

124 Այժմ դուք, որ կարող եք հավատալ և իրոք հավատում եք, կարևոր չէ, թե ի՞նչ է կատարվում, պարտադիր չէ կատարվի, սերմը ընկավ այնտեղ։ Այդ փոքրիկ ինչ–որ բանը ձեր ներսում, այդ Ձայնը։ Երեխայի՛ ծնող, կարևոր չէ, թե ինչ վիճակում է նա, դուք հավատո՞ւմ եք, որ Աստծո սերմը ընկավ ձեր սրտում, որ, այդ տղան բժշկվելու է։ Մնացածները, որ աղոթում են մեկը մյուսի համար, հավատո՞ւմ եք, որ Աստծո սերմը ընկավ ձեր սրտում՝ «Իմ հիվանդությանն ավարտված է»։ Այդ դեպքում հավատքի աղոթք արվեց ձեզ համար, այդ խոչընդոտը վերացված է։ Եվ եթե սատանան երբևէ փորձի, անմիջապես պատասխանեք. «Այն կիրակի առավոտ իսպանական այդ եկեղեցում կանգնած, հավատի աղոթք արվեց ինձ համար։ Եվ Աստված խոստացել է»։ Հավատքով արված աղոթքը պիտի փրկի հիվանդին և Աստված նրանց պիտի ոտքի կանգնեցնի։ Այն պետք է կատարվի։ Հավատո՞ւմ եք դրան։ Ասե՛ք՝ «Ամեն»։ Աստված օրհնի ձեզ։ Այժմ ծառայությունը նորից հանձնում եմ Ռոուզ եղբորը, կարծում եմ այստեղ է, Ջոուել Ռոուզ եղբորը։

63-0120M ԱՍՏԾՈ ՁԱՅՆՆ ԱՅՍ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒՄ
«Առաքելական Եկեղեցի»
Ֆենիքս, Արիզոնա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org